



Ռաֆֆի

Ողբ Զեյթունցի կնոջ տանը մեռած տղամարդու վրա

Ափսո՞ս, որ այդպես անփառք և անշուր,
Փափուկ մահճի մեջ փչեցիր քո հոգին,
Ափսո՞ս, որ մահը քեզի հանդիպեց
Քո խաղաղ տնակի կամարի տակին:

Դու մի քաջ էիր՝ արի և հզոր,
Քաջերի սուրը թող նյութեր քեզ մահ,
Կովի դաշտիցը քո արյունոտ մարմին
Ես տուն քերեի՝ սրտով գո՞հ... ուրա՞խ...

Ինձ դառն չեր հայնժամ թափել արտասուր
Քո արնով ներկված դիակի վերան,
Ինձ ցավ չեր հայնժամ ողբերով երգել
Քո պարծանքներով կանզնած գերեզման:

Չի չայց տիկնայք ինձի կասեին՝
Փա՛ռք, պատիվ քեզի, երջանիկ այրի,
Դու բախտավոր ես կնիկների մեջ,
Չի կորուսիր այր՝ քաջ, հսկա, արի:

Ինձ քաղցր էր հայնժամ թափեք արտասուր
Արնով զարդարված դիակիդ վերան,
Եվ ծաղիկներով պճնել, զարդարել
Քո միշտ պաշտելի հողաղամբարան:

Թո՛ղ պատերազմում, կոհվի դաշտում,
Մեր Հայրենիքի փրկության համար,
Սուրբ քո ձեռին, փառավոր մահով,
Թո՛ղ դու զոհեիր քո արյուն արդար:

Ինձ քաղցր էր հայնժամ իմ ճեռով փակել
Քո այդ սև, հպարտ, շիշած աչքերը,
Զի հազար աչեր պիտ արտապեին
Քո հզոր թրից սպանվածները:

Զի ես գիտեի, որ դու թոցրիր
Հարյուր գլուխներ թշնամու ուսերեն,
Զի ես գիտեի, որ դու զրկեցիր
Հարյուր կնիկներ յուրյանց այրերեն:

Այդ զարհուրելի խոր-խոր սպիսեր
Քո արությանցը՝ վկա և նշան,
Չունի մի տղամարդ հայոց քաշերից,
Ո՞չ քուրդ, ո՞չ արաք և ո՞չ մի թուրքման:

Բայց ափսո՞ս, քեզ հետ՝ ալ-արդակարմիր
Դու մի թարմ սպի շրտարար գերեզման,
Դու մեռա՛ր, անբախտ, հասարակ մահով
Փափուկ մահճի մեջ... քո բարձի վերան...